Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
հունիսի 29-ի նիստի N 28
արձանագրային որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԽ ԸՄԲՇԱՄԱՐՏ ՄԱՐԶԱՁԵՎԻ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

### 1. ՆԱԽԱԲԱՆ

1. Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդը, ի թիվս այլ մարզաձևերի (ձիավարություն, ջիրիդ, նետաձգություն և այլն), զբաղվել է հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևով, որը եղել է ազգային տոնախմբությունների անբաժանելի մասը:

2. Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը խորհրդային ժամանակաշրջանում մասսայականություն չի վայելել:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն 2000 թվականից «Հայաստանի «ազգային կոխ» ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ սկսեց կազմակերպել և անցկացնել հայկական ազգային կոխ ըմբշամարտի մեծահասակների Հայաստանի Հանրապետության առաջնություններ:

4. 2007 թվականից հայկական ազգային կոխ ըմբշամարտի Հայաստանի Հանրապետության առաջնությունների անցկացումը դադարեցվեց, քանի որ ֆինանսավորման հետ կապված դժվարություններ էին ծագում:

5. 2015 թվականին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից առաջադրվեց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների ցանկում ընդգրկվեց «Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացման խթանում» գերակա խնդիրը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի № 131 որոշման № 2 հավելվածի 35-րդ կետ), ի կատարումն որի՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2016 թվականի ընթացքում մշակեց և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացրեց «Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացման հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ): «Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության № 46 արձանագրային որոշման նախագիծը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի նիստում:

6. Հայեցակարգը համապատասխանում է Անկախ Պետությունների Համագործակցության երկրների կառավարությունների ղեկավարների խորհրդի

2014 թվականի մայիսի 30-ի «Անկախ Պետությունների Համագործակցությունում ազգային մարզաձևերի աջակցության ու զարգացման մինչև 2020 թվականն ընկած ժամանակամիջոցի ծրագրի և դրա իրականացմանն ուղղված 2015-2017 թվականների միջոցառումների ծրագրի մասին» որոշմանը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» № 122-Ն որոշման 1-ին հավելվածի 87-րդ կետով որպես Նախարարության միջոցառում է ընդունվել ««Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի 2017-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնելը», իսկ նույն որոշման 2-րդ հավելվածի 83-րդ կետով որպես Նախարարության գերակա խնդիր է ընդունվել «Հայաստանի Հանրապետությունում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացումը»:

8. 2015 թվականին ստեղծվել է «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը, որը «Հայաստանի «ազգային կոխ» ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության իրավահաջորդն է և կատարում է նպաստավոր աշխատանք հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը պահպանելու, զարգացնելու և տարածելու համար Հայաստանի Հանրապետության մարզերում, Արցախում և հայկական սփյուռքում:

9. Հայկական սփյուռքում հովանավորների ջանքերով մշտապես, նույնիսկ խորհրդային տարիներին, կազմակերպվել և այժմ էլ կազմակերպվում են հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մրցումներ:

## 2. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և հայկական սփյուռքում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը, ինչը լուրջ ներդրում կլինի ազգապահպանության գործում:

11. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով սահմանվում է մշակութային արժեքներին հաղորդակցվելու երեխայի իրավունքը, որտեղ մասնավորապես նշվում է. «Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք»: Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը՝ որպես դարերի խորքից եկած մարզաձև, կազմում է հայ ազգի հոգևոր մշակույթի անբաժանելի մասը: Հայկական կոխ ըմբշամարտ մարզաձևին արժանի ուշադրություն դարձնելու դեպքում կվերականգնվեն ազգային մարզական գեղեցիկ ավանդույթները, և ազգային պատմական մարզաձևը կփոխանցվի հաջորդ սերունդներին:

12. Ազգային մարզաձևերին բնորոշ է դինամիկություն և շարժական ունակությունների ձևավորմանը նպատակաուղղված մոտեցում, որոնք եղել են

հայ ազգի ռազմաֆիզիկական դաստիարակության բաղկացուցիչ տարրեր: Ըմբշամարտը հնագույն ժամանակներից եղել է հայ ժողովրդի ուղեկիցը, և հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պահպանումը, տարածումը և զարգացումը լուրջ քայլեր կլինեն ֆիզիկական դաստիարակության՝ դարերով գոյատևած ազգային համակարգի ուսումնասիրման և դրանում առկա առավելությունները ներկա ու ապագա սերունդների ֆիզիկական դաստիարակության գործընթացում կիրառելու համար:

13. Հայկական ազգային կոխ ըմբշամարտի գոտեմարտերն ուղեկցվում են մարզաձևին հատուկ ազգային երաժշտությամբ և պարով, իսկ մարզիկները հագնում են հայկական տարազին բնորոշ զարդանախշերով ձևավորված մարզահագուստ: Կոխ ըմբշամարտը՝ որպես ազգային մարզաձև, կոչված է պահպանելու հայ ժողովրդի ազգային նկարագիրը և նպաստելու ազգային ինքնագիտակցության խորացմանն ու ամրապնդմանը:

14. Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի բաղկացուցիչ մաս կազմող պարային բաղադրատարրը արտահայտում է սպորտի և արվեստի կապը:

15. Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի Հայաստանի Հանրապետության առաջնությունների ժամանակ լավագույն արդյունքներ ցուցաբերած մարզիկները կմասնակցեն ըմբշամարտի տարատեսակ համարվող գոտիներով ըմբշամարտ մարզաձևի միջազգային մրցաշարերի: Գոտիներով ըմբշամարտ մարզաձևի մրցաշարեր կանցկացվեն նաև Հայաստանի Հանրապետությունում:

16. Մեր պետության քաղաքականությունն ուղղված է մարդու նկատմամբ հոգատարության դրսևորմանը, նրա ֆիզիկական, բարոյական ու հոգևոր զարգացմանը նպաստելուն: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման, առողջ ապրելակերպի ձևավորման հարցերը ներկայումս հատուկ և մեծ ուշադրության կարիք ունեն: «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում ներկայացվում են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների պարզաբանումները, որտեղ նշվում է. «Ֆիզիկական կուլտուրա՝ մարդու առողջ ապրելակերպի և ֆիզիկական կատարելագործման համար հասարակության կողմից ստեղծված և օգտագործվող հոգևոր ու նյութական արժեքների ամբողջություն»: Հայաստանի Հանրապետության, Արցախի և հայկական սփյուռքի երիտասարդ սերնդի համար հայկական ազգային կոխ ըմբշամարտին՝ որպես մնայուն հոգևոր արժեքին ծանոթանալը և տիրապետելը անհրաժեշտություն է:

## 3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

17. Կոխի մրցումները միջնադարյան Հայաստանում կազմակերպվում էին հրապարակներում, մարզարաններում կամ ուղղակի ազատ տարածքներում, բակերում և այլուր:

18. Հնում մարզիկները մրցությանը մասնակցել են մարզաչուխաներով (բրդյա կտորից կարված երկար վերարկու) և կաշվե փափուկ կիսաճտքավոր կոշիկներով: Նախքան գոտեմարտի սկիզբը ժողովրդական նվագարանների

խումբը հնչեցրել է կոխի ավանդական պարային եղանակը, և մրցակիցները կոխի ավանդական պարն են պարել, որից հետո միայն սկսվել է մրցամարտը: Մրցամարտն ուղեկցվել է երաժշտությամբ: Մարտի տևողությունը եղել է 6 րոպե (ներկայումս մեծահասակների գոտեմարտի տևողությունը 5 րոպե է, պատանիներինը՝ 4 րոպե):

19. Ներկայումս հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մրցությունների ժամանակ ըմբիշները գոտեմարտում են ըմբշամարտի մրցագորգի վրա: Մրցումներն անցկացվում են մինչև 18 տարեկան պատանիների և 18-ից բարձր տարիքի մարզիկների միջև:

20. Մեր ժամանակներում մրցակիցները հագնում են երկու տարբեր գույների մրցակցային համազգեստ՝ սպիտակ և կապույտ, որոնք ունենալու են հայկական ազգային տարազին բնորոշ որոշ տարրեր, ինչպես նաև հատուկ մարզակոշիկ (կամ մասիկ): Համազգեստը պետք է բաղկացած լինի վերնաշապկից, անդրավարտիքից և թելագործ գոտուց:

21. Գոտեմարտից առաջ երկու մրցակիցները կատարում են պարտադիր պար, որի վերջում լավագույն կատարողին տրվում է առավելություն: Եթե գոտեմարտում մարզիկների ստացած միավորները հավասար են, ապա պարի համար ստացած առավելությունը դառնում է որոշիչ, և տրվում է հաղթանակ:

22. Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մրցումների, ինչպես նաև ցուցադրական ելույթների ժամանակ պարտադիր է բժշկի ներկայությունը:

23. Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի ուսուցանումը իրականացնում են համապատասխան վերապատրաստում անցած հունա-հռոմեական ըմբշամարտի, ազատ ոճի ըմբշամարտի, ձյուդոյի և սամբոյի մարզիչները:

## 4. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԽ ԸՄԲՇԱՄԱՐՏ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԸ

24. Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պահպանման, տարածման և զարգացման համար անհրաժեշտ են շահագրգիռ գերատեսչությունների՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի, տարածքային կառավարման և զարգացման, մշակույթի, կրթության և գիտության ու սփյուռքի նախարարությունների համակցված գործողությունները:

25. Հարկավոր է, որ ազատ ոճի, հունա-հռոմեական ըմբշամարտերի, սամբոյի և ձյուդոյի խմբեր և ըստ այդմ հայկական ազգային կոխ ըմբշամարտ սովորեցնելու պայմաններ ունեցող Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների վերադաս գերատեսչությունները (Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի, կրթության և գիտության նախարարություններ, մարզպետարաններ, քաղաքապետարաններ) նպատակադրված մոտեցում ցուցաբերեն նշված մարզաձևերի խմբերի սաներին հայկական ազգային կոխ ըմբշամարտ

մարզաձևը սովորեցնելու համար: Դա անհրաժեշտ է ճիշտ ֆիզիկական դաստիարակություն ստանալու համար:

26. Նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության և Արցախի ազատ ոճի և հունա-հռոմեական ըմբշամարտերի, սամբոյի և ձյուդոյի մարզիչները նախապես կվերապատրաստվեն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վերապատրաստման դասընթացներում, որոնք կազմակերպվելու են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում: «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի «ե» կետում ասվում է, որ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական երաշխիքները, ի թիվս այլ երաշխիքների, ներառում են «Այդ բնագավառի համար կադրերի պատրաստման, վերապատրաստման ապահովումը, բնակչության ֆիզիկական դաստիարակության և բարձրագույն նվաճումների՝ սպորտի հիմնահարցերին վերաբերող գիտական հետազոտությունների նպատակային ֆինանսավորումը»:

27. Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևն անհրաժեշտ է ուսուցանել Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջներում՝ ըմբշամարտի և ձյուդոյի բաժանմունքներում:

28. Ցանկալի է, որ «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը ընդգրկի համահայկական խաղերի ծրագրում:

29. Անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության օժանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համատեղ աշխատանքներ տանելու՝ հայկական սփյուռքում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը տարածելու և զարգացնելու համար: Մասնավորապես հարկավոր է հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը կամավորության սկզբունքով ուսուցանել սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի մասնակիցներին:

## 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

30. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ կարող են համարվել պետական և համայնքների բյուջեները, մասնավոր հատվածի ներդրումները և նպատակային նվիրատվությունները, օրենքով չարգելված այլ աղբյուրները: Ծրագրի միջոցառումների իրականացման համար պետական աջակցության մասով ֆինանսավորումը կարող է նախատեսվել համապատասխան բյուջետային տարիների համար կրթության, սպորտի և տարածքային կառավարման ոլորտների գծով պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերով և պետական բյուջեներով սահմանվող ծախսերի սահմանաչափերի շրջանակներում՝ ելնելով տվյալ տարիների ծախսային առաջնահերթություններից:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
հունիսի 29-ի նիստի N 28
արձանագրային որոշման

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ
# ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԽ ԸՄԲՇԱՄԱՐՏ ՄԱՐԶԱՁԵՎԻ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

| № | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարման պատասխա-նատուն | Համակատարողը | Ժամկետը | Ֆինանսավոր-ման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հունա-հռոմեական ըմբշամարտի, ազատ ոճի ըմբշամարտի, ձյուդոյի, սամբոյի մարզիչների վերապատրաստում | Հունա-հռոմեական ըմբշամարտի, ազատ ոճի ըմբշամարտի, ձյուդոյի, սամբոյի մարզիչներին սովորեցնելու են հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մարտավարական հնարքները, մրցավարական կանոնները: Վերապատրաստման գործընթացը կիրականացվի «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում անցկացվող վերապատրաստման դասընթացներում և «հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ մարզերում | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br><br>«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ (համաձայնությամբ),<br><br>«Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն | 2017-2020 թվականներ, շարունա-կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | կազմակերպվող սեմինարներում: Վերապատրաստման դասընթացներից հետո նշված մարզաձևերի մարզիչները պատրաստ կլինեն իրենց խմբերի սաներին դասավանդելու հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը: | | (համաձայնությամբ) | | |
| 2. | Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի ուսումնական և մրցավարական կանոնների ձեռնարկի կազմում | Ձեռնարկը պարունակելու է հայկական ազգային կոխ ըմբշամարտի մարտավարական հնարքների և մրցավարական կանոնների նկարագրություն: Ձեռնարկի լույս ընծայումը մեթոդական աջակցություն կլինի հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մարզիչների համար: | «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ (համաձայնու–թյամբ) | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,<br><br>«Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017 թ. | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3. | Մրցավարների վերապատրաստում | Երևանում և ՀՀ մարզերում իրականացվելու է մրցավարների վերապատրաստում: Վերապատրաստվելուց հետո մրցավարները պատրաստ կլինեն դատելու հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի գոտեմարտերը: | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու–թյուն (համաձայնու–թյամբ) | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2017-2020 թվականներ, շարունա-կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4. | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության ֆինանսավորում | Միջոցառումն ուղղված է հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պահպանմանը, զարգացմանը և տարածմանը: | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017-2020 թվականներ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հայաստանի Հանրապետության համապատասխան թվականների պետական բյուջեի՝ «Աջակցություն հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանը» ծրագրով | | | | | |
| 5. | 2017-2020 թվականների, ըստ տարիների «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության մարզական միջոցառումների օրացուցային պլանով նախատեսված միջոցառումների իրականացում | Անհրաժեշտ է ապահովել «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության յուրաքանչյուր տարվա մարզական միջոցառումների օրացուցային պլանով նախատեսված միջոցառումների անցկացումը: 2017 թվականի միջոցառումներն են՝ ՀՀ մարզային առաջնություններ, պատանիների ՀՀ առաջնություն, սույն Ծրագրի 7-րդ կետում նշված միջոցառումը, սույն Ծրագրի 6-րդ կետի միջոցառումը: | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու–թյուն (համաձայնու–թյամբ) | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2017-2020 թվականներ, շարունա-կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 6. | Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի գոտեմարտերի համար համազգեստի ձեռքբերում | Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մրցումային գոտեմարտերի համար անհրաժեշտ է համապատասխան համազգեստ: Համազգեստի ձեռքբերումը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի ծրագրում (տե՛ս սույն Ծրագրի 4-րդ կետը): Համազգեստի ձեռքբերումը անհրաժեշտ է ընդգրկել | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017 թ., շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ծրագրում: | | | | |
| 7. | Անկախ Պետությունների Համագործակցության անդամ-պետություններում անցկացվող ազգային մարզաձևերի միջոցառումներին (ազգային մարզաձևերի փառատոներ, համաժողովներ) մասնակցություն | 2017 թվականին նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող՝ հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևով զբաղվող մարզիկների մասնակցությունը Ռուսաստանի Դաշնության Ուլյանովսկ քաղաքում օգոստոսի 11-16-ը անցկացվելիք Անկախ Պետությունների Համագործակցության անդամ-պետությունների ազգային մարզաձևերի և խաղերի առաջին փառատոնին ըմբշամարտ գոտիներով մարզաձևի մրցումների ծրագրով: Միջոցառումն ուղղված է Անկախ Պետությունների Համագործակցության անդամ-պետություններում ազգային մարզաձևերի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը: | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017 թ., շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 8. | Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի քարոզչություն | Իրականացվելու է հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի միջոցառումների լուսաբանում զանգվածային լրատվամիջոցներով, այդ թվում՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պաշտոնական կայքում: | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017-2020 թվականներ, շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 9. | Ջավախքում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի | Ավանդաբար՝ խորհրդային տարիներից սկսած, փետրվար-մարտ ամիսներին Ջավախքում | Ջավախքի «Ջավախք» հասարա–կական | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» | 2017-2020 թվականներ, շարունա– | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մրցաշարի անցկացում | հովանավորների միջոցով կազմակերպվում է հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մրցաշար: «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը տրամադրում է մրցավարներ՝ միջոցառումը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Միջոցառման նպատակն է նպաստել հայապահպանությանը: | կազմակեր–պություն (համաձայնու–թյամբ) | հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | կական | ֆինանսավորում չի պահանջվում: |
| 10. | Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պարտադիր ուսուցանում հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, սամբո և ձյուդո մարզաձևերի խմբերում | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, համայնքային և Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցներում մարզչի մեկական հաստիքի ավելացում՝ հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևն ուսուցանելու համար: Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ավելացնել մեկական հաստիք: | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն,<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br><br>Երևանի քաղաքա–պետարան (համաձայնությամբ),<br><br>ՀՀ մարզպետարաններ,<br><br>«Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017-2020 թվականներ, շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի ուսուցանում Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում | Անհրաժեշտ է Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջների ըմբշամարտի և ձյուդոյի բաժանմունքներում ուսուցանել հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը: | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br><br>«Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017-2020 թվականներ, շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 12. | Արցախի մանկապատանեկան մարզադպրոցներում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պարտադիր ուսուցանում հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, սամբո և ձյուդո մարզաձևերի խմբերում | Արցախի մասնագետների (հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, սամբո, ձյուդո մարզաձևեր) հրավիրում՝ վերապատրաստում անցնելու Հայաստանի Հանրապետությունում: Վերապատրաստման դասընթացներից հետո նշված մարզաձևերի արցախցի մարզիչները իրենց խմբերի սաներին կուսուցանեն հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը: | ՀՀ սպորտի և երիտասարդու-թյան հարցերի նախարարու-թյուն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br><br>Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարություն,<br><br>«Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017-2020 թվականներ, շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 13. | Արցախում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մրցաշարի կազմակերպում | Արցախում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մրցաշարի կազմակերպում, որին կմասնակցեն Արցախի, հայկական սփյուռքի և Հայաստանի Հանրապետության մարզիկները: | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու-թյուն (համաձայ-նությամբ | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,<br><br>Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարություն | 2018 թ., շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14. | 2019 թվականի համահայկական խաղերի ծրագրում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի ընդգրկում | Նախատեսվում է 2019 թվականի համահայկական խաղերի ծրագրում ընդգրկել հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևը: | «Համահայ–կական խաղերի համաշխարհա–յին կոմիտե» հասարակական կազմակերպու–թյուն (համաձայնու–թյամբ) | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2019 թ. | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 15. | 2019 թվականի համահայկական խաղերից հետո կամավորության սկզբունքով հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի ուսուցանում հայկական սփյուռքից ժամանած մարզիկներին | 2019 թվականի համահայկական խաղերին մասնակցող հայկական սփյուռքից ժամանած մարզիկները մի քանի օր ավել կմնան՝ հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի դասեր ստանալու համար: Ծրագիրը հիմնված է կամավորության սկզբունքի վրա: | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու–թյուն (համաձայ–նությամբ) | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,<br><br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2019 թ. | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |
| 16. | «Արի տուն» ծրագրի մասնակից սփյուռքահայերին հայկական ազգային կոխ ըմբշամարտի ուսուցանում | «Արի տուն» ծրագիրը սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության ծրագիր է: Կամավորության սկզբունքով հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի ուսուցանումը «Արի տուն» ծրագրին մասնակցող երիտասարդներին միաժամանակ համահունչ է «Արի տուն» ծրագրի նպատակներին և հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացման հայեցակարգին: | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու–թյուն (համաձայ–նությամբ) | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,<br><br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2017-2020 թվականներ, շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 17. | Հայկական սփյուռքում հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի դասընթացների կազմակերպում | Կիրականացվի մասնագետների գործուղում այն երկրներ, որտեղ կա հայկական սփյուռք, և տեղում դասընթացների կազմակերպում | «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու-թյուն (համաձայ-նությամբ) | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն,<br><br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2017-2020 թվականներ, շարունա–կական | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: |